ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ 2023.

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ. «ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ.

Ինտերնետային կայք.	https://setcenter.am/
Հասցե.	**ՀՀ, ք. Երևան, 0009, Աբովյան 27.**
Հեռախոս՝	**+374 10 542779, +374 10 565353,**
Էլ.հասցե՝	office@setcenter.am

1. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ.

Համառոտ կերպով ներկայացվեցին հաշվետու տարում (2022 թվականին) Ընկերության կորպորատիվ կառուցվածքը և դրա բարելավման նպատակով ձեռնարկված քայլերը:

2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Համաձայն Ընկերության կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետիրոջ ընդհանուր ժողով,

բ) Խորհուրդ,

գ) Գործադիր մարմին.

2. Ընկերության միակ Բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է, որը տիրապետում է բոլոր բաժնետոմսերին, որոնք կազմում են Ընկերության կանոնադրական կապիտալի 100%-ը:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորած անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից:

3. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 304.620.000. (երեք հարյուր չորս միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 30.462 (երեսուն հազար չորս հարյուր

վաթսուն երկու) հատ հասարակ սովորական անվանական բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի արժեքը 10.000. (տասը հազար) ՀՀ դրամ է:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

1. Հաշվետու տարում՝ 2022 թվականին, գումարվել է Խորհրդի հինգ նիստ՝ 25.01.2022թ., 09.03.2022թ., 22.03.2022թ., 31.03.2022թ. 27.05.2022թ.:

2022 թվականին գումարվել է Բաժնետիրոջ երկու ընդհանուր ժողով՝ 15.03.2022թ. արտահերթ ընդհանուր ժողով (աուդիտ իրականացնող անձի հաստատման օրակարգով) և 27.06.2022թ. տարեկան ընդհանուր ժողով:

ԲԸԺ-երը գումարվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 3 հասցեում:

Բաժնետերը տարեկան ընդհանուր ժողովի մասին ծանուցվել է էլ. փոստով Ժողովի գումարումից մեկ ամիս առաջ: Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են էլ.փոստով: Օրակարգի և ԲԸԺ-ին վերաբերող տեղեկությունները և փաստաթղթերը՝ ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց տրամադրելու կարգը սահմանված է Ընկերության կանոնադրությամբ, (տես՝ 11.5.4. կետ):

1. Բաժնետերը հնարավորություն է ունեցել ԲԸԺ-ին մասնակցել լիազորված անձի միջոցով:
2. Բաժնետերը կումուլյատիվ քվեարկությամբ չի քվեարկել, քանի որ միակ բաժնետերն ինքն է, այսինքն՝ բաժնետերը մեկն է:
3. Տարեկան ԲԸԺ-ի օրակարգը, քվեարկության արդյունքները և նիստի արձանագրությունը հասանելի են Ընկերության ինտերնետային կայքում:

4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհրդի գործառույթները.

Կանոնագրքի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության 13.4. հոդվածը սահմանում են Խորհրդի բացառիկ իրավասությունները: Խորհուրդը պատվիրակված իրավասություններ չունի:

Խորհրդի կազմը.

Ներկայումս՝ 2023 թվականի մայիսի 30-ի դրությամբ, Ընկերության Խորհուրդը բաղկացած է 5 (հինգ) անդամից, որոնցից 4-ը ոչ գործադիր են:

ԽՈՐՀՈՒՐԴ

Պաշտոնը և ազգանունը	Գործադիր[1]	Ոչ գործադիր[2]	Անկախ	Խորհրդի անդամ է սկսած՝
1. Նախագահ՝ Լ.Հովհաննիսյան		Ոչ գործադիր		17.12.2021թ.
2. Անդամ՝ Վ. Ենգիդունյան		Ոչ գործադիր		25.06.2014թ.
3. Անդամ՝ Ս. Պետրոսյան		Ոչ գործադիր		23.12.2016թ.
4. Անդամ՝ Ե. Ազոյան		Ոչ գործադիր		23.12.2016թ.
5. Անդամ՝ Մ. Մեսրոպյան	գործադիր			16.08.2021թ.

Խորհրդի գործադիր անդամը Ընկերության ամենօրյա ղեկավարման մեջ ներգրավված անձն է: Համաձայն Կանոնագրքի, Խորհրդի ոչ գործադիր անդամը այն անձն է, ով ներգրավված չէ Ընկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:

Խորհրդի անդամների համառոտ կենսագրությունները՝ նրանց գործառույթների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ստորև.

1. Վարդան Ենգիդունյան.

ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի պետական բաժնեմասի կառավարման վարչության՝ պետական գույքի կառավարման և մոնիտորինգի բաժնի պետ.

Խորհրդի անդամ է սկսած՝ 25.06.2014թ.

Yengidunjan70@mail.ru

2. Երանուհի Ազոյան.

«ՀԷՑ» ՓԲԸ գլխավոր հաշվապահի տեղակալ:

Խորհրդի անդամ է սկսած՝ 23.12.2016թ.

azoyan_ev@ena.am

3. Ստեփան Պետրոսյան.

Ռուս-հայկական պետական համալսարանի ֆիզիկա-տեխնիկական ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ.

Խորհրդի անդամ է սկսած՝ 23.12.2016թ.

stepan.petrosyan@rau.am

4. Մեսրոպ Վանիկի Մեսրոպյան.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ գլխավոր տնօրեն.

Խորհրդի անդամ է սկսած՝ 16.08.2021 թ.

Mesrop.mesropyan@setcenter.am

5. Լիանա Սուրիկի Հովհաննիսյան.

ՀՀ ՏԿԵՆ, Նախարարի օգնական, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ Խորհրդի նախագահ.

Խորհրդի անդամ է սկսած՝ 17.12.2021թ. Խորհրդի նախագահ է ընտրվել՝ 24.12.2021թ.

lihovhannisyan1990@gmail.com

5. Խորհրդի գործունեությունը

Տարվա ընթացքում (*2022թ.)*, Խորհուրդը գումարել է 6 (վեց) նիստ, որից 5-ը (հինգը) հեռակա քվեարկությամբ:.

6. Խորհրդի աշխատանքի գնահատումը

Խորհուրդը չի ընդունել գնահատման քաղաքականություն:

7. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ.

Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել.

8. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ.

Ընկերության գլխավոր տնօրենը հանդիսանում է գործադիր մարմին:

9. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ.

Ընկերության Հիմնադիրի կողմից ներքին աուդիտն իրականացնող չի նշանակվել:

10. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ.

Ընկերության կորպորատիվ քարտուղարի պարտականությունները կատարում է Խորհրդի քարտուղարը՝ համաձայն Կանոնագրքի 22-րդ հոդվածի /Խորհրդի նիստերի հրավիրում, նիստերին ներկայացվող փաստաթղթերի նախապատրաստում,արձանագրության վարում և այլն/:

11. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ.

2022 թվականին Ընկերության հաշվետու տարվա (2021 թվականի) ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ է նշանակվել

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊ Ընկերությունը. տնօրեն՝ Տարոն Վարազդատյան. (Հասցե՝ ՀՀ, 0009, ք. Երևան, Աբովյան 41շ., թիվ 5,Հեռախոս՝ + (374) 10 58-19-58):

2023 թվականին Ընկերության հաշվետու տարվա (2022 թվականի) ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ է նշանակվել «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊ Ընկերությունը, տնօրեն՝ Մ. Պետրոսյան, staff@group-avc.com ք. Երևան,Մյասնիկյան 5.

12. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության 2021թ տարեկան հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է Բաժնետիրոջ տարեկան ընդհանուր ժողովում՝ 2022թ. հունիսի 27-ին:

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնագրքի 23-րդ հոդվածով սահմանված ողջ տեղեկությունները:

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**